# Արձանագրություն N 2-1

## ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-25/52 ծածկագրով փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների (ավտոքաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ)) ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 09.09.2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Տ. Ղուկասյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Կ. Բարսեղյան |
| | Ս. Մատինյան |
| | Ա. Խաչատրյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ. Հակոբյան |

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Գ. Խաչատրյան

### 1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

---

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Գնման ընթացակարգի հայտը www.armeps.am կայքի միջոցով բացվել է 09.09.2025թ. ժամը 11:00-ին:

դ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

*ՀՀ դրամ*

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման (գնացուցակ) գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գին |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ | 203 000 | 203 000 | - | 203 000 |

1.2 Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին

2.1 Գնման ընթացակարգի մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի ներկայացրած հայտում առկա չէ հրավերով պահանջվող Հավելված N 2.1-ը՝ տեղեկանքը:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 10.09.2025թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում՝ այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել **ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-25/52** ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender5@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ 0:*

## 3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

3.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվում է արձանագրված անհամապատասխանությունը մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 11.09.2025թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ______________________ Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ______________________ Կ. Բարսեղյան

______________________ Ա. Խաչատրյան

______________________ Ս. Մատինյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ______________________ Գ. Հակոբյան